

ք. Երևան

14.01.2019թ.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ մշակույթի 03/14.2/8957-18, ՀՀ բնապահպանության 4/02.2/40218-18, ՀՀ գյուղատնտեսության ԳՊ/ԱԲ-1/9150-18, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների 02ՏԱ/22.1ՀԲ/7823-18, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների 03/16.3/10330-18, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 05/14.1/19624-18 նախարարությունների, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.2/6246-18, Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ԼՄ/7487-18 և ՀՀ ԷԵ և ԲՊ նախարարության Զրային կոմիտեի 01/07/4272-18 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաղատ բնակավայրի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին**, որով նախատեսվում է Սիսիան համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության **0.0096** հա /կադաստրային ծածկագիր՝ **09-069-0132-0001-ից**/ այլ հողեր փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, «էներգետիկայի օբյեկտների հողեր» գործառնական նշանակության՝ փոքր հզորության հիդրոէլեկտրակայանի և օժանդակ կառույցների սպասարկման հողամասի ընդլայնման համար:

Հանձնաժողովի նախագահ՝  Վ. Տերտերյան

քարտուղար՝  Ռ. Մինասյան